Խոնարհում բոլոր հերոսների ու զոհվածների հիշատակի առաջ: Փա՛ռք հերոսներին և կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը

09.05.2026

Սիրելի՛ հայրենակիցներ,
Մայիսի 9-ը մեզ համար ոչ միայն հաղթանակի, այլև խաղաղության արժեքը վերահիմաստավորելու օր է: Այս օրը մենք հարգանքով հիշում ենք բոլոր նրանց, ովքեր պայքարեցին ֆաշիզմի դեմ՝ հանուն մարդկության ազատ ու արժանապատիվ ապագայի: Հայ ժողովուրդը նույնպես իր կարևոր ներդրումն ունեցավ այդ պայքարում՝ ցուցաբերելով խիզախություն և նվիրում:
Այս հաղթանակը մեզ համար պատմության էջ չէ միայն. այն նաև հիշեցնում է, թե որքան թանկ արժեք են խաղաղությունն ու մարդկային համերաշխությունը: Պատերազմների ու անկայունության պայմաններում աշխարհն այսօր կրկին կանգնած է խաղաղության պահպանման և անվտանգության ամրապնդման կարևոր խնդրի առաջ, իսկ մեզ համար առավել կարևոր է կարողանալ պաշտպանել մեր պետականությունը, ապահովել մեր ժողովրդի անվտանգ կյանքն ու վստահ ապագան:
Այսօր, երբ մեր տարածաշրջանում խաղաղության պահպանման յուրաքանչյուր քայլ ունի առանձնահատուկ նշանակություն, մենք պարտավոր ենք առավել պատասխանատու լինել մեր պետության, մեր հասարակության և գալիք սերունդների հանդեպ: Ուժեղ, զարգացող, անվտանգ և արժանապատիվ Հայաստանը մեր լավագույն պատասխանն է պատմության բոլոր փորձություններին և մեր լավագույն հարգանքի տուրքը՝ բոլոր նահատակների հիշատակին:
Խոնարհում բոլոր հերոսների ու զոհվածների հիշատակի առաջ:
Փա՛ռք հերոսներին և կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը